

4.

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
PHILOLOGY, PEDAGOGY AND PSYCHOLOGY  
ФИЛОЛОГИЧЕСКИЕ, ПЕДАГОГИЧЕСКИЕ И ПСИХОЛОГИЧЕСКИЕ  
НАУКИ**

**ԴԵՖՈ - ՍՎԻՖԹ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

**ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐԱ**

*Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս  
e-mail: arakelyan48@yandex.com*

**Հոդվածում փորձ է արվում դիտարկել 18-րդ դարի անգլիական գրականության երկու խոշորագույն դեմքերի՝ Դանիել Դեֆոյի և Ջոնաթան Սվիֆթի, նրանց գրական ժառանգության, մասնավորապես հիմնական երկերի՝ «Ռոբինզոն Կրուզո» և «Գուլիվերի ճանապարհորդությունը» վեպերի միջև առկա ընդհանրությունները և զանազանությունները: Ընդգծվում է այն հանգամանքը, որ խնդիրը նոր չէ գրականության մեջ, դրանով զբաղվել են ինչպես անգլիացի, այնպես էլ ռուս բազմաթիվ գիտնականներ:**

**Ապրելով միևնույն դարաշրջանում և միևնույն երկրում՝ Դեֆոն և Սվիֆթը միաժամանակ նաև մեծապես տարբերվում են իբրև մտածողներ և գրողներ: Դեֆոյի աշխարհայացքը կապված է նոր զարգացող բուրժուազիայի քաղաքական գործունեության հետ, մինչդեռ Սվիֆթի հետաքրքրությունները ինչ-որ չափով կապված էին արիստոկրատիայի հետ: Եթե Դեֆոն իր վեպում խոսում է մարդու մեծության, գործարարության և կամքի մասին՝ ամեն կերպ բարձրացնելով Անգլիան և անգլիացուն, ապա Սվիֆթը ծաղրածանակի է ենթարկում անգլիական բարքերն ու քաղաքակրթությունը:**

**Հոդվածում այն միտքն է զարգացվում, որ այս հակամարտությունը ոչ թե աղքատացրել, այլ հարստացրել է անգլիական գրականությունը:**

**Բանալի բառեր՝** բուրժուական գործարարություն, բնական մարդ, բանականություն, փիլիսոփայական վեպ, լիլիպուտ, կեղծ գիտություն, պեսիմիզմ, լավատեսություն:

Երբ 1719թ. առանձին գրքով հրատարակվեց Դանիել Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոն», և հետո՝ յոթ տարի անց՝ 1726թ.-ին, Ջոնաթան Սվիֆթի «Գուլիվերի ճանապարհորդությունները», վեպի և վիպական պոետիկայի մասին եվրոպական պատկերացումները արմատապես փոխվեցին: Անցած ավելի քան երեք հարյուր տարվա ընթացքում այդ վեպերը ոչ միայն մոռացության չեն մատնվել, այլև գնալով ավելի ու ավելի կայուն տեղ են զբաղեցնում գրականության դաշտում, դառնում գիտական բազմազան հետաքրքրությունների նյութ: Դրանք ոչ միայն անգլիական, այլև համաեվրոպական և համաշխարհային չափանիշներով գլոբալործոցներ են: Այդ գրքերը հաճախ հիշատակվում են միասին, անգամ գրադարակներում հայտնվում են կողք կողքի: Սակայն գրականության պատմության մեջ շատ քիչ գրքեր կարող են գտնվել, որոնք աչքի ընկնեն գաղափարների նման հակադրությամբ, քիչ հերոսներ, որոնք մտածեն տրամագծորեն այդքան միմյանց հակառակ, և հեղինակներ, որոնք Դեֆոյի և Սվիֆթի նման ապրեն նույն երկրում, լինեն ժամանակակիցներ, բայց և այդքան հակառակ պատկերացումներ ունենան մարդու և հասարակության մասին: Բնականաբար, գրական առանձնահատուկ արժեք ներկայացնելով առհասարակ 18-րդ դարի անգլիական լուսավորության և մշակույթի ուսումնասիրության տեսանկյունից, այս վեպերը հիմնավորապես ուսումնասիրվել են համապատասխան գիտությունների (գրականագիտություն, փիլիսոփայություն, սոցիոլոգիա...) կողմից, այդուհանդերձ այսօր էլ պարբերաբար գիտությունը կենտրոնանում է դրանց խնդիրների վրա, դրանք դառնում են զանազան քննարկումների և գիտաժողովների առարկա:

Հանրահայտ է, որ վեպի պատմությունն անմիջականորեն կապված է հասարակության մեջ անհատի և անհատական գիտակցության ձևավորման ընթացքի հետ: Թեև անտիկ մտածողներից մեկին՝ սոփեստ Պրոտագորասին է պատկանում մարդու մասին երբևէ ասված ամենախիզախ միտքը, այն է՝ «Ամեն ինչի չափը մարդն է», սակայն անտիկ հանրությունը դեռևս պատրաստ չէր ողջ խորությամբ ընկալելու և կիրառելու այն: Պատահական չէ, որ անտիկ գրականության մեջ վեպի ժանրը սկսեց ձևավորվել համեմատաբար ուշ՝ հելլենիզմի շրջանում, երբ արդեն ձևավորվել և կայացած ժանրեր էին էպոսը, քնարերգությունը և դրաման (ըստ էության վեպի ժանրային նախորդները)՝ նպաստավոր պայմաններ գտնելով անհատական կյանքի պատկերման համար: Վերածննդի շրջանում, հումանիզմի պայմաններում, երբ ամեն ինչի կենտրոնում իր բազմազան հետաքրքրություններով հայտնվում է մարդը, ծնվում է Վերածննդի վեպը (Բոկասչո, Ռաբլե, Սերվանտես, Սիդնի): Նոր

ժամանակներում սկիզբ առած բուրժուական հեղափոխությունները վերջնականապես լուծեցին ժանրի զարգացման հանրային միջավայրի խնդիրը: Այս ասպարեզում եվրոպական երկրների մեջ առաջիններից մեկը Անգլիան էր: Այստեղ 17-րդ դարում (1649, 1688) տեղի ունեցած հեղափոխությունների հետևանքով 18-րդ դարի կեսերին Անգլիան արդեն ձևավորված բուրժուական երկիր էր, ուստի հենց այստեղ դրվեցին եվրոպական նոր վեպի հիմքերը, ժանր, որը, եթե արտահայտվելու լինե՞նք հեզելյան գեղագիտության եզրաքանությամբ, իրենից այլ բան չի ներկայացնում, քան «մոդեռն բուրժուական էպոպեա», որում միմյանց են հակադրվում «սրտի պոեզիան» և «մարդկային հարաբերությունների պրոզան»: Այդ հիմքերը դրվում են գրական երկու հսկաների՝ Դեֆոյի և Սվիֆթի ջանքերով: Այսպիսով, համաեվրոպական ճանաչում գտած գրական չորս հերոսներին (Համլետ, Դոն Կիխոտ, Ֆաուստ և Դոն ժուան, որոնք ստեղծվում են 17-րդ դարում) ավելացան ևս երկուսը՝ Ռոբինզոն Կրուզոն և Լեմյուել Գուլիվերը:

Ինչ խոսք, Դեֆոն և Սվիֆթը աշխարհին հայտնի են նախ և առաջ իբրև «Ռոբինզոն Կրուզո» և «Գուլիվերի ճանապարհորդությունները» վեպերի հեղինակներ: Բայց նրանց գրական ժառանգությունը, որը բավական ընդարձակ է (հատկապես Դեֆոյին, որի ստեղծագործությունների թիվը հասնում է շուրջ երեք հարյուր հիսունի), դրանցով չի սպառվում: 18-րդ դարի անգլիական Լուսավորության զարդն են կազմում նաև նրանց փայլուն պամֆլետներն ու էսսեները: Նրանց համար հատկանշական է նաև հետևյալ հանգամանքը. գրական վարպետության և մտածողության այն մակարդակը, որին տիրապետում էին նրանք, եվրոպական ոչ մի գրող դեռ չուներ: Միայն ավելի ուշ, նրանցից հետո պետք է գար Վոլտերի, Ռուսսոյի, Գյոթեի, Ստեռնի ժամանակը: Անկասկած, գրական նման վարպետությունն արդյունք էր անգլիական հանրային և մշակութային բուռն կյանքի, որն ընթանում էր լուսավորական դարաշրջանին բնորոշ իրարամերժ գաղափարների կրքոտ բախումներով: Անգլիան ապրում էր նորացման շնչով, և այդ նորացման պատկերացումների ողջ բազմազանությունն ու հակասականությունը տեսանելի է Դեֆոյի և Սվիֆթի գլուխգործոց վեպերում: Դրանք շատ արագ թարգմանվեցին եվրոպական լեզուներով և ձեռք բերեցին լայն ճանաչում: Ավելին՝ դուրս գալով Անգլիայի սահմաններից, դրանք այլ երկրներում ձեռք բերեցին ազգային նոր դիմագիծ և սկսեցին ազգային այլ մշակույթների մաս կազմել: Դա նորություն չէր եվրոպական գրականության համար: Ըստ էության նման կերպարանափոխությունների և նորանոր կերպարանափոխությունների ճանապարհով արդեն անցել ու անցնում էին անգլիական Համլետը, իսպանական Դոն Կիխոտն ու Դոն ժուանը, գերմանական Ֆաուստը: Շուտով

Ֆրանսիայում, Իսպանիայում, Գերմանիայում և այլուր ստեղծվեցին սեփական Ռոբինզոններն ու Գուլիվերները: Այս առումով, անկասկած, ավելի խորն ու լայն է «Ռոբինզոն Կրուզոյի» թողած հետքը, որի մասին կխոսվի ստորև: Հայ գրականության մեջ նույնպես կարելի է տեսնել նման անդրադարձներ: Այսպես, Շահամիր Շահամիրյանն իր «Որոգայթ փառաց» հանրահայտ աշխատության մեջ (1772) ներկայացնում է Ռոբինզոնի նկարը՝ իբրև բնական մարդու և աշխատասիրության իդեալ: Հետագայում վեպը բազմիցս թարգմանվում է հայերեն: 1857թ.-ին այն թարգմանում է Ռաֆայել Պատկանյանը, իսկ երեք տարի անց՝ 1860թ.-ին, մեծ գրողի հայրը՝ Գաբրիել Պատկանյանը, ոգեշնչված Ռոբինզոնի կերպարով, հրապարակում է «Վարդանամակ կամ Արկածք Վարդանայ հայազգի պատանույ» վեպը<sup>1</sup>:

Այս վեպերի համադիր ընթերցումը երևան է բերում ոչ միայն զանազանություններ, այլև նմանություններ: Դա վերաբերում է թե վեպերին, և թե դրանց հեղինակներին:

Դանիել Դեֆոյին Ջոնաթան Սվիֆթին միավորում է այն հանգամանքը, որ նրանք անգլիական Լուսավորության հարազատ զավակներն են, իսկ դա նշանակում է, որ նրանք ապրել են ոչ միայն գրական, այլև հանրային հետաքրքրություններով, ունեցել են մարդու և հասարակության իրենց իդեալները, մասնակցել են երկրի հասարական մտքի ձևավորմանը, ավելին՝ նրանց ծայրը լսելի է եղել երկրի քաղաքական ամենաբարձր շրջանակներում:

Երկուսն էլ իրենց գաղափարներն արտահայտելու համար ընտրում են իրականությանն առավելապես մոտ և բանավիճային ժանրերը՝ վեպը և պամֆլետը: Վերջինիս պահանջվածությունը լուսավորական Անգլիայում (և ոչ միայն այստեղ) կասկածից վեր է: Դեֆոյի «Չտարյուն անգլիացին», «Գովք անարգանքի սյունին», Սվիֆթի «Գրքերի պատերազմը», «Տակառի հեքիաթը», «Համեստ առաջարկ» պամֆլետներն համարվում են ժանրի դասական օրինակներ, որոնցով սերունդներ են կրթվել: Ինչ մնում է վեպին, ապա այն իրադարձություններով հարուստ ծովային վեպն է, որն օժտված է արտաքին, արկածային պլանից անցնելու ներքին՝ փիլիսոփայական պլանի՝ վերջինիս բնորոշ հարուստ գաղափարական շերտերով հանդերձ: Կղզու մետաֆորը, Հոմերոսից, Ռաբլեից անցնելով Դեֆոյին և Սվիֆթին, վերածնունդ է ապրում: Դա օգնում է, որ այդ վեպերն ընդհուպ մոտենան գրական պրիտչայի ժանրին և հոգեհարազատ լինեն ոչ միայն պատանու, այլև էլիտար ընթերցողի համար:

Դրանք ընդհանրություններ ունեն հերոսների առումով: Ինչպես Ռոբինզոնը, այնպես էլ Գուլիվերը, ըստ էության, որոշակի սոցիալական խավ և հանրություն ներկայացնելով, այդուհանդերձ մենակներ են, սոցիալ-

<sup>1</sup> Առավել ամբողջական տեղեկության համար տե՛ս Փարթամյան Վ., Հայ-անգլիական գրական առնչություններ, Երևան, 1975:

փիլիսոփայական որոնումների մատնված մարդիկ, որոնք շարունակ և անդադար փնտրում են: Դա փիլիսոփայական իրավիճակ է: Ընթերցողը լայն հնարավորություն է ստանում խորապես ճանաչելու նրանց ներաշխարհն ու հոգեբանությունը: Նրանք երկուսն էլ բանականության հերոսներ են, նրանց անձանոթ է զգացմունքների աշխարհը: Դիկկենսն, օրինակ, համարում էր, որ Դեֆոն անզգա գրող է:

Ի դեպ, երկու հեղինակներն էլ ստացել են հոգևոր կրթություն:

Այնուամենայնիվ, ավելի քան խոսուն են այս վեպերի և դրանց հեղինակների միջև առկա զանազանությունները: Նրանք միմյանց հետ կապված են առավելապես իբրև հակադրություններ: Ավելին, Ջոնսթան Սվիֆթի վեպի (դա նրա միակ վեպն է) ստեղծումն ուղղակիորեն պայմանավորված է Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոյի» հետ. եթե չգրվեր Դեֆոյի վեպը, չէր ստեղծվի նաև Սվիֆթինը: «Դեֆոն հավատացնում էր,- գրում է Դ. Ուոնովը,- որ «Ռոբինզոնի արկածներում» յուրաքանչյուր բառ ճշմարտություն է; այդ դեպքում, որպեսզի ապացուցի, որ այդ ամենը կեղծիք է, Սվիֆթը գրեց «Գուլիվերի ճանապարհորդությունները»<sup>1</sup>:

Դանիել Դեֆոն և Ջոնսթան Սվիֆթն անցել են կյանքի միանգամայն տարբեր ճանապարհներ:

Դեֆոն (1660- 1731) ծնվել և դաստիարակվել է գործարար պուրիտանի ընտանիքում, նրա հայրը զբաղվում էր մսի առևտրով: Հետագայում գործարարությունը ոչ միայն կենսակերպ, այլև մտածելակերպ է դառնում Դեֆոյի համար, որը ողջ կյանքի ընթացքում աչքի է ընկնում ամենաբազմազան նախաձեռնություններով, հիմնում է գինու արտադրության սեփական ֆիրմա, զբաղվում գուլպայի, կոմինդրի արտադրությամբ, առևտրական գործերի բերումով շատ շրջում է Եվրոպայում (Պորտուգալիա, Իսպանիա, Ֆրանսիա, այս առումով նրա կյանքը շատ նման է գրական մեկ այլ հսկայի՝ Բոկաչչոյի կյանքին), դասական լեզուներից զատ, որ սովորել էր հոգևոր ակադեմիայում, տիրապետում էր նաև եվրոպական մի շարք լեզուների:

Քաղաքական հայացքներով, բնականաբար, բուրժուամետ գործիչ էր, վիզերի կուսակցության անդամ, այդ նպատակով ստեղծում է «Տեսություն» սեփական ամսագիրը, իր գաղափարները պաշտպանում է տասնյակ պամֆլետներում, որի հետևանքով ունենում է ինչպես վերելքի (հատկապես բուրժուամետ Վիլիելմ Օրանացու թագավորության շրջանում՝ 1689-1694), այնպես էլ հալածանքների տարիներ: Դրանցից խուսափելու համար ստիպված է եղել փոխել սեփական Ֆո ազգանունը և դարձնել Դեֆո: Մի քանի անգամ,

---

<sup>1</sup> Урнов Д., Робинзон и Гулливер, Москва, 1973, стр. 3.

արիստոկրատական իշխանություններից պատժվելով, գամվել է անարգանքի սյունին: Նրա գործարարական գաղափարները լավագույնս ամփոփված են Ռոբինզոնի կերպարում: Դեֆոն Անգլիայում տնտեսական լրագրության հիմնադիրն է:

Ի տարբերություն Դեֆոյի, որը, հոգևոր կրթություն ստանալով, երբեք չգբաղվեց եկեղեցական գործունեությամբ, Սվիֆթը (1667-1745) պրոֆեսիոնալ հոգևորական էր, իսկ 1719-ից հետո, նշանակվելով Դուբլինի սբ. Պատրիկ եկեղեցու վանահայր, հեռանում է Լոնդոնից և մինչև կյանքի վերջը ապրում Իռլանդիայում: Բուրժուական գործարարությունն օտար էր նրան ոչ միայն բնավորության առումով, այլև քաղաքական համոզմունքների: Նա տորիների կուսակցության հետևորդ էր տարիներ շարունակ, երբ ծառայում էր լորդ Թեմպլի գրասենյակում իբրև քարտուղար, թեև հետագայում խոր կասկածներ ուներ նաև արիստոկրատիայի հանդեպ:

Այսպիսով, նոր ձևավորվող բուրժուազիան և արիստոկրատիան, որոնք ներկայացնում էին անգլիական հասարակության երկու հակադիր բևեռները, դառնում են Դեֆոյի և Սվիֆթի ընկերային-քաղաքական գործունեության հիմքերը՝ իրենց հակադիր ողջ ուղղվածությամբ հանդերձ: Նրանք՝ իբրև մարդ և քաղաքացի, լիովին ներկայացնում են այդ հակադրությունը:

Ցավոք, ոչ Դեֆոն, և ոչ էլ Սվիֆթը միմյանց ստեղծագործությունների մասին ամբողջական հոգվածներով հանդես չեն եկել: Պահպանվել են սոսկ կցկտուր տեղեկություններ նրանց հարաբերությունների վերաբերյալ: Նրանք հավանաբար միմյանց տանել չեն կարողացել և առիթը բաց չեն թողել վիրավորական և արհամարհական արտահայտություններով որակելու միմյանց: Դեֆոն Սվիֆթի մասին գրում է, որ թեև նա չափազանց գրագետ է, սակայն իր վարքով ցինիկ է, բարքով՝ մարդատյաց, խոսքի մեջ անհարգալից, իսկ Սվիֆթը Դեֆոյին համարում էր անգրագետ գրչակ: Չնայած դրան՝ այդ հակադրության լիարժեք պատկերը կարելի է վերականգնել՝ հենվելով նրանց հիմնական երկերի՝ վեպերի վրա:

Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոյի կյանքն ու արկածները» վեպի գեղարվեստական բարձր արժեքը հանրամատչելի օրագրային պատումը միֆափիլիսոփայական բարդ խնդիրների հետ համադրելու մեջ է: Ուստի այն բազմաշերտ է: Արկածային շերտից զատ պարունակում է նաև բուրժուական գործարարության, բնական մարդու, լուսավորական հումանիզմի, միֆական և այլ շերտեր, որոնք գրեթե ամբողջությամբ ընդգրկում են մարդու և հասարակության մասին լուսավորական դարաշրջանի բոլոր կարևորագույն խնդիրները:

---

<sup>1</sup> St' u Урнов Д., Робинзон и Гулливер, Москва, 1973, стр. 65.

Վեպը նախ հետաքրքիր արկած է, փորձությունների շղթա, որոնք կարողանում է հաջողությամբ հաղթահարել քաղաքակրթական «զենքերով» զինված անգլիացին: Վեպը գրվել է իրական փաստերի հիման վրա: Կրուզոյի նախատիպը Ալեքսանդր Սելկիրկն է, շոտլանդացի նավաստին, որը 1704թ., գտնվելով նավապետի հետ, ուտելիքի աննշան պաշարով և զենքով ափ է իջնում անծանոթ կղզում և չորսուկես տարի մեն-մենակ ապրում այդտեղ (դա խաղաղովկիանոսյան Խուան Ֆերնանդես կղզին է): Սելկիրկի պատմությանը Դեֆոն կարող էր ծանոթ լինել Վուդս Ռոջերսի «Նավարկություն աշխարհի շուրջը» (1712) գրքի և «Անգլիացի» ամսագրում Ռիչարդ Ստիլի տպագրած ակնարկի (1713) միջոցով:

Դանիել Դեֆոն նախ և առաջ ստեղծում է արկածներով տարված մարդու կերպար, անհանգիստ որոնողի, որը բնորոշ անգլիական բնավորություն է: Բայց այդ կերպարը միաժամանակ համադրության եզրեր ունի մի կողմից նորկտակարանային անառակ որդու մասին առակի (Ղուկաս, 15, 11-31), մյուս կողմից միֆական Ողիսևսի հետ: Խոսելով վերջինիս հետ Կրուզոյի ընդհանրությունների մասին՝ նկատի պետք է ունենալ Իթակեի տիրոջ՝ Տրոյան կործանողի ոչ թե իմաստությունն ու խորամանկությունը, այլ ոգու անհանգստությունն ու թափառելու կիրքը, այսինքն՝ այն Ողիսևսին, ինչպիսին նրան ընկալում է Դանտեն: «Աստվածային կատակերգության» մեջ հերոսը ներկայանում է այսպես.

Ոչ գորովը որդուս, ոչ գուրն ալեհեր  
Հորս հանդեպ, ոչ էլ սերն այն փոխադարձ,  
Որ իմ կնոջ պիտի բերկրանքը կազմեր,  
Կարող չեղան զսպել փափագն իմ ուժգին  
Ճանաչելու աշխարհները հեռավոր,  
Եվ տեսնելու չարն ու բարին մարդկային:

Դժոխք, Երգ 26-րդ, 94-100

Ըստ Դանտեի՝ Ողիսևսը մարդկային կյանքի իմաստը տեսնում է ոչ թե «անասնաբար ապրելու», այլ «արեգակի ընթացքին հետևելու» և «անբնակ աշխարհները ճանաչելու» մեջ:

Ի դեմս Կրուզոյի, Դեֆոն ստեղծում է նաև մեկ այլ հզոր կերպար: Դա բուրժուա-գործարարն է: Սա նույնպես բնորոշ անգլիական բնավորություն է: Նա թեև հեղինակի կամքով իսպառ զրկվում է իր ընկերային միջավայրից, սակայն կամքի, բանական փորձառության և Աստծու հանդեպ հավատի շնորհիվ հաղթահարում է ամեն դժվարություն: Վեպը փառաբանություն է մարդկային (ամենից առաջ՝ անգլիացու) ամենագոր ուժի մասին: Ռոբինզոնին բնորոշ են անգլիական ծավալապաշտությունն ու գաղութատիրոջ մտածողությունը: Նրան առաջնորդում է հաշվենկատ բանականությունը: Այս

առումով Դեֆոյի վեպը Զոն Լոկի «Փորձ մարդկային բանականության մասին» տրակտատի գրական անդրադարձ է: Հայտնվելով կղզում, նա իրեն զգում է իբրև կատարյալ սեփականատեր: Նա իրեն նշանակում է նահանգապետ և կղզին համարում իր սեփականությունը: Դրամը շատ կարևոր բան է նրա համար. կործանված նավի գորոցներից մեկում գտնելով դրամով լի քսակ և մտածելով, որ այն պետք է ծովը նետել, քանզի ծախսելու ոչ մի հնարավորության չկա, այդուհանդերձ այն դնում է գրպանը: Այս առումով Ռոբինզոնին կարելի դիտարկել իբրև ժամանակակից գործարարների նախահայր: Կրուզոն ոչ մի վայրկյան չի դադարում մտածել, որ ինքը քաղաքակիրթ հանրության մի մաս է: Նա չի հրաժարվում այն մթերքներից, առարկաներից ու գործիքներից, որոնք մնացել էին խորտակված նավում: Նրա մտածողությունը միջին անգլիացու մտածողության սահմաններում է, փիլիսոփայական և աստվածաբանական բարդ հարցերը Կրուզոյի բանը չեն, օրինակ՝ Աստծու մասին Ուրբաթի որոշ հարցեր նրան փակուղու մեջ են դնում: Իսկ ահա կենսական խնդիրներ լուծելու համար նրա միտքն աշխատում է գերազանց:

Ոչ պակաս նշանակալից է վեպում բնական մարդու շերտը: Այն ներկայացնում է ոչ թե Ռոբինզոնը (նա բնական միջավայրում հայտնված քաղաքակիրթ մարդն է), այլ Ուրբաթը: Այս կերպարը թեև նորություն չէ համաշխարհային գրականության պատմության մեջ հնագույն ժամանակներից ի վեր, օրինակ, շումերական էպոս «Գիլգամեշի» (մ.թ.ա. 3-րդ հազարամյակ) հերոսներից մեկը՝ Էնկիդուն, կարող է դիտարկվել իբրև բնական մարդու առաջին օրինակներից մեկը, այդուհանդերձ Լուսավորության ժամանակներում Ուրբաթի հանդես գալը միանգամայն նոր բովանդակություն է ստանում: Նա բնության (Աստծու) իսկական էակ է, մարմնավոր և բարոյական հատկանիշներով անթերի, նա չգիտի, թե ինչ բան է սուտը: Ժան-Ժակ Ռուսսոն իր «Էմիլ կամ Դաստիարակության մասին» վեպում, ոգևորված Ուրբաթի կերպարով, գրում է. «Եթե մեզ արդեն անհապաղ անհրաժեշտ են գրքեր, ապա գոյություն ունի գիրք, որը, իմ կարծիքով, բովանդակում է բնական դաստիարակության մասին ամենահաջողված աշխատասիրությունը: Այդ գիրքն առաջինն է լինելու, որ կարդալու է Էմիլը. այն միայնակ ներկայացնելու է նրա ողջ գրադարանը և մշտապես պատվավոր տեղ է զբաղեցնելու այնտեղ: Դա կլինի այն տեքստը, որի համար բնական դաստիարակության մասին մեր բոլոր գրույցները ծառայելու են ընդամենն իբրև ծանոթագրություն: Առաջընթաց մեր շարժման դեպքում նա լինելու է չափանիշ մեր դատողությունների համար, ու քանի դեռ չի փչացել մեր ճաշակը, այդ գրքի ընթերցանությունը դուր է գալու մեզ: Այդ ի՞նչ հրաշալի



գիրք է: Մի՞թե Արիստոտելն է: Պլինիոսը<sup>1</sup> չէ՞: Գուցե Բյուֆոնն<sup>2</sup> է: Ոչ, դա «Ռոբինզոն Կրուզոն» է»<sup>3</sup>: Դեֆոյի ստեղծած Ուրբաթի, այսպես կոչված, ազնիվ վայրենու կերպարը խոր հետք թողեց հետագա գրականության մեջ: Այդ կերպարի հեռու կամ մոտ արձագանքները կարելի է տեսնել ամերիկացիներ Ֆենիմոր Կուպերի, Հենրի Թորոյի, Հերման Մելվիլի, ֆրանսիացի Ժյուլ Վեռնի, անգլիացիներ Ռեդիարդ Բիպլինգի, Ուիլյամ Գոլդինգի<sup>4</sup> և բազմաթիվ այլ գրողների երկերում: Այսօր էլ Եվրոպայում գրվում են նմանատիպ վեպեր (Ծննդոց, 3, 17):

Վերջին ժամանակներում գրականագիտությունը ավելի շատ խոսում է վեպում առկա միֆական զուգահեռների և միֆաբանական ասպեկտների մասին, որոնցից մեկի շուրջ խոսվեց վերը: Մեկ այլ տեսակետի համաձայն Ռոբինզոնը կրկնում է մարդկության անցած ճանապարհը՝ հաստատելով մեղսագործությունից հետո իր ճանապարհը տքնանքով ու չարադատ աշխատանքով անցնելու մարդուն տրված Աստծու անեծքը՝ «Տանջանքով հայթայթես քո սնունդը քո կյանքի բոլոր օրերին»<sup>5</sup>:

Ամփոփելով վեպի մասին հնչած բնավ ոչ ամբողջական կարծիքները՝ կարելի է ասել, որ Դեֆոն ստեղծել է իսկապես գրական գլուխգործոց, ժամանակների մեջ իր նորանոր կողմերով անընդհատ բացվող մի երկ, որի տեքստը, փաստորեն, ավելին է, քան նրանում դրված հեղինակային նախնական մտահղացումը:

Գալով Ջոնաթան Սվիֆթի «Գուլիվերի ճանապարհորդությունները» վեպին՝ ապա այն կոմպոզիցիայով, գաղափարներով ու լեզվով ճիշտ և ճիշտ հակառակն է «Ռոբինզոն Կրուզոյի»: Լինելով ծաղրանմանությունը վերջինիս՝ այն հետևողականորեն հակադրվում և փորձում է կազմաքանդել այն կառույցը, որ ստեղծում է Դեֆոն:

Եթե Դեֆոյի վեպը իրական պատումի և իրական աշխարհագրության շնորհիվ ստեղծում է իրական միջավայրի պատկերներ, ապա Սվիֆթի վեպում ամեն ինչ անիրական է, թեև այստեղ ևս հեղինակը ջանք չի խնայում

---

<sup>1</sup> Նկատի ունի Պլինիոս Ավագին (25-79)- հռոմեացի գրող, «Բնական պատմության» հեղինակ:

<sup>2</sup> Բյուֆոն Ժ. Լ. Լեկլերկ (1707-1788)-ֆրանսիացի բնագետ, «Բնական պատմության» հեղինակ:

<sup>3</sup> Руссо Ж.-Ж., Педагогические сочинения, в 2-х томах, том 1, Москва 1981, стр. 192.

<sup>4</sup> Գոլդինգի («Ճանճերի տերը») հանրահայտ վեպում ամեն ինչ ընթանում է Դեֆոյի վեպին հակառակ. եթե վերջինիս վեպում մարդը չի վայրենանում, ապա Գոլդինգը, վերստին օգտագործելով կղզու մոտիվը, ի դեմս երեխաների, պատկերում է մարդու կատարյալ անկումը:

բծախնդիր նկարագրությունների շնորհիվ իրական տպավորություն թողնելու: Նա անգամ իր վեպի մեջ ներառնում է նաև անիրական, չեղած կղզիների քարտեզներ: Թեև գրքի սկզբում նա խոստովանում է, որ իր վեպի նպատակը մարդկանց բարեփոխելն ու կատարելագործելն է, բայց վեպը համոզում է, որ հեղինակը դժվար թե հավատում է իր խոսքերին:

Եթե Կրուզոն փառաբանում է Անգլիան և անգլիական գործարարությունը, Գուլիվերն ամենուրեք սևացնում է այդ երկիրն ու նրա պատմությունը:

Լիլիպուտիան, որի մասին պատմվում է գրքի առաջին մասում, Անգլիայի տիկնիկային ծաղրապատկերն է:

Լսելով իր երկրի «վերջին հարյուր տարիների պատմական տեղեկությունները», որ հաղորդում է Գուլիվերը, հսկաների երկիրԲրոդլինգնեգի թագավորը (այդ մասին պատմվում է գրքի երկրորդ մասում) պատասխանում է. «...դա մի պատմություն է, ուր կա դավադրությունների մի կույտ, խռովություններ, սպանություններ, կոտորած, հեղափոխություններ և աքսորներ, որոնք ազահույթան...կեղծավորության, դաժանության, կատաղության արդյունք են», և ապա եզրակացնում, որ Գուլիվերի հայրենակիցների մեծագույն մասը «զգվելի զեռունների մի ոճրագործ ցեղ է, որի նմանը երբեք չի սողացել երկրի երեսով»<sup>1</sup>:

Մերժելով բանական մարդու և առհասարակ բանականության հնարավորությունները (այսինքն՝ այն, ինչը Դեֆոյի հերոսի գլխավոր զենքն ու կռվանն է), Սվիֆթը, չորս մասերից բաղկացած վեպի երրորդ մասում խոսում է Լագադոյի ակադեմիայի մասին և ծաղրածանակի ենթարկում գիտությունը: Գիտության հաղթանակն այստեղ ծաղրական երանգ ունի: Այդ կապակցությամբ Ջորջ Օրուելը ընդծում է այն հանգամանքը, որ Սվիֆթը հաճախ ներկայացվում է իբրև ընդամենը կեղծ գիտության թշնամի, «Սակայն մի շարք հատվածներում նա ջանքեր չի խնայում, որ ապացուցի ցանկացած գիտական հետազոտության անօգտակարությունը»<sup>2</sup>: Նա գտնում է՝ Սվիֆթին սկզբունքորեն շատ նման է Լև Տոլստոյը, որը նույնպես չէր հավատում գիտության հնարավորություններին և առհասարակ մարդկային երջանկությանը երկրի վրա: Գիտնականների մարմինը արտաքուստ խեղված է, նրանց գիտական հայտնագործությունները թշվառ կյանքի են հանգեցնում երկրի վրա: Անմահության մասին մարդու երազանքը վերածվում է նողկալի պատկերի: Ստրուկոբրուզները (այսինքն՝ անմահները) զգվելի են բոլորի համար և իրենք էլ անձամբ ուզում են մեռնել:

<sup>1</sup> Սվիֆթ Ջ., Գուլիվերի ճանապարհորդությունները, Երևան, 2014, էջ 155-156:

<sup>2</sup> Оруэлл Дж., 1984 и эссе разных лет, Москва, 1989, стр. 289.

Վերջին մասում, որտեղ վեպի աստիճանաբար աճող երգիծանքը հասնում է իր բարձրակետին, չնայած այն ընթերցողին չի զարմացնում, քանի որ նախորդ մասերում հեղինակը հիմնավորապես նախապատրաստում է դրան, նկարագրվում է տարօրինակ մի կղզի: Այստեղ տեր ու տնօրեն են քաղաքակիրթ ձիերը, իսկ իբրև ստրուկներ նրանց ծառայում են մարդիկ, այսպես կոչված եհուները: Սրանք աղտեղի կյանքով ապրող անբարո արարածներ են, որոնք հայտնվել են ձիերի կղզում «ծովի կողմից»՝ լքվելով իրենց ընկերներից և այստեղ մնալով «այլասերվել»: Այս դեպքում ևս ակնհայտ է Սվիֆթի ուղղակի ակնարկը անգլիացիների հասցեին: Եթե Դեֆոյի հերոսն իր միջավայրում տարածում է լուսավորություն և ստեղծում բարիք, ապա Գուլիվերի կարծիքով՝ միմիայն այլասերում և ապականություն: Սա նաև ինչ-որ չափով հեգնական պատասխան է բնական մարդու մասին լուսավորիչների իդեալներին: Շատ լավ հասկանալով, որ ինքը նույնպես եհու, այսինքն՝ մարդ է, Գուլիվերը շտապում է թողնել ձիերի կղզին, իսկ տուն վերադառնալով՝ ամիսներ շարունակ փակվում է իր սենյակում, չի ցանկանում հանդիպել ոչ մեկի, անգամ հարազատ կնոջ հետ և փորձում պաշտպանվել հայրենի երկրի և սեփական ընտանիքի եհուներից: Սվիֆթը համոզված է, որ ողջ մարդկությունը բաղկացած է հենց եհուներից: Այդ կապակցությամբ նա երբեմն գործածում է «երկոտանի կենդանի» պատկեր- արտահայտությունը, ինչը առաջ է բերում երկու զուգահեռ- համանմանություն: Առաջինը կապված է Պլատոնի հետ: Դիոգինես Սինոպցու հետ զրուցելիս նա մարդուն այսպիսի բնորոշում է տալիս. «Մարդը կենդանի է երկու ոտքերի վրա՝ առանց թևերի»<sup>1</sup>: Երկրորդը գտնում ենք Շեքսպիրի «Լիր արքա» ողբերգության մեջ: Աշխարհից դառնացած, ամեն ինչ կորցրած, արքայից հասարակ մարդու վերածված Լիրը այսպես է խոսում մարդու մասին. «Անպաճույճ (այսինքն՝ բնական, չզարդարված) մարդը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի այսպիսի խեղճ, մերկ, երկճղակավոր անասուն...»<sup>2</sup>:

Ի հեճուկս մարդու փառաբանության մասին Դեֆոյի վեպի՝ այս դեպքում ունենք մարդու կատարյալ անկման վեպ: Սվիֆթը երգիծանքի միջոցով փորձարկման է ենթարկում լուսավորիչների բանականապաշտությունը (ռացիոնալիզմը), և այնտեղ, որտեղ նրանք տեսնում էին անսահման հնարավորություններ անհատի զարգացման համար, տեսնում է միայն այլասերման հնարավորություններ: Սվիֆթի վեպի դինամիկան գլխավոր հերոսի դիտանկյունից անընդհատ անկման միտում ունի, որի հետևանքով Գուլիվերը առաջին մասի հսկայից վերջին մասում

<sup>1</sup> Диоген Лаэртский, О жизни, учениях и изречениях знаменитых философов, Москва, 1986, стр. 226.

<sup>2</sup> Շեքսպիր, Երկեր, Երևան, 1991, 402 էջ:

վերածվում է եհուի: Եթե Ռոբինզոնը, իրադրության փոփոխության հետ անընդհատ ինքն էլ փոփոխվում է, ապա Գուլիվերը միշտ մնում է նույնը, նա միայն դիտում է, հետևում և փաստեր հավաքում: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ ի տարբերություն ազատ Ռոբինզոնի, Գուլիվերը մշտապես անազատ է: Առանձնահատուկ խոսակցության և ուսումնասիրության թեմա է երկու վեպերի լեզուն: Դեֆոյի ճշգրիտ, օրագրային, արձանագրային լեզվի ծաղրանմանությունն ստեղծելու նպատակով Սվիֆթը իսկապես մշակում է երգիծավեպի լեզվի նոր տարբերակ, որը հարուստ է լեզվական նորարարություններով, տերմիններով, հապավումներով, որոնցից շատերի մեկնաբանությունն ու իմաստը մնում է մութ: Վերջապես, եթե Դեֆոյի վեպը հասցեագրված է լայն հանրությանը, Սվիֆթի վեպը նախատեսված է առավելապես էլիտար ընթերցողի համար:

Իբրև երգիծավեպ՝ «Գուլիվերի ճանապարհորդությունները», անկասկած, լավագույններից մեկն է իր տեսակի մեջ, սակայն նրանում վիճելի կողմեր կարելի է տեսնել մարդու ըմբռնման հետ կապված: Մարդուն և մարդկային հանրությունն ավելի կատարելագործված տեսնելու երազանքը ուղեկցել է գեղարվեստական գրականության ողջ պատմությունը՝ Հոմերոսից մինչև Էքզյուպերի: Մարդու մարմնավոր և բարոյական ուժերի հանդեպ կասկածներով լի գրողների պակաս նույնպես գրականության պատմությունը չի ունեցել նույն Հոմերոսից մինչև Կաֆկա: Թեև ընդհանուր առմամբ վեպը տեղավորվում է մարդկության անկման հայտնի ըմբռնումների մեջ (Հեսիոդոս, Դանիել Մարգարե, Դանտե), սակայն Սվիֆթի մարդատյացությունն աննախադեպ է: Եվ բնական է, որ մեծ գրողը առաջ է բերել գրողներից շատերի տարակուսանքն ու ափսոսանքը՝ խառնված հիացմունքի խոսքերին: Ժան-Պոլը նրա անվանում է «...հեգնանքի գրոսմայստեր հների և նորերի մեջ»<sup>1</sup>: Թոմաս Էլիոթը ընդգծում է Սվիֆթի հուսահատությունը և գրում, որ նա մարդկանց հանդեպ նողկանքի մեծ վարպետ է<sup>2</sup>: Հայնրիխ Բյուլի տպավորությամբ «Գուլիվերի ճանապարհորդությունները» իր երբևէ կարդացած ամենադառը և ամենաչար սատիրան է<sup>3</sup>: Իր տարակուսանքը Սվիֆթի և նրա վեպի հանդեպ չի թաքցնում նաև Ջորջ Օրուելը, որն, ի դեպ, բավականին ազդվել է նրանից: «Գուլիվերի ճանապարհորդությունները» վեպին նվիրված հոդվածում Օրուելը նրան համարում է «անբուժելի հիվանդ» և կարծում, որ իր վեպով նա «դուրս է գալիս մարդկային ցեղի դեմ»<sup>4</sup>: Վեպի մեջ

<sup>1</sup> Жан-Поль, Приготовительная школа эстетики, Москва, 1981, стр. 171.

<sup>2</sup> Элиот Т., Избранное: Религия, культура, литература, Москва, 2004, стр. 561.

<sup>3</sup> Белль Г., Каждый день умирает частица свободы, Москва, 1989, стр. 88.

<sup>4</sup> Оруэлл Дж., նույն գրքում, էջ 286:

հեքիաթի, պրիտչայի ժանրային գծեր տեսնելու գրականագետների հակումը՝ հավանաբար թելադրված է այդ «դառը և չար սատիրան» փոքր-ինչ մեղմացված տեսնելու միտումով:

Ամփոփելով անգլիական Լուսավորության երկու մեծ գրողների և նրանց գլուխգործոց վեպերի մասին ասվածը՝ կարևորում ենք այն հանգամանքը, որ ստեղծագործելով Անգլիայի պատմության ամենահարուստ շրջաններից մեկում՝ 18-րդ դարում, և ունենալով միանգամայն տարբեր փիլիսոփայական և գրական հայացքներ՝ նրանք, այդուամենայնիվ, ոչ թե աղքատացնում, այլ հարստացնում են հայրենի ու համաշխարհային մշակույթը:

## ABOUT DEFOE AND SWIFT RELATIONS

ARAKELYAN ARA

*Doctor of Philology, Professor*

*Lecturer of the Chair of Armenian Language and Literature, GSU*

The article attempts to study the similarities and differences in the worldview of two major representatives of the 18th-century English literature - Daniel Defoe and Jonathan Swift, reflected in their literary heritage, in particular, in the works "Robinson Crusoe" and "Gulliver's Travels. It is emphasized that the issue is not new in the literature, as many English and Russian scholars have addressed it.

Living in the same country and in the same era, Defoe and Swift also have completely different views as thinkers and writers. Defoe's worldview is tied to the political activity of the newly emerging bourgeoisie, while Swift's interests were to some extent linked to aristocracy. In his novel Defoe speaks of human greatness, proficiency, and power of will by glorifying England and the Englishmen in every possible way, whereas Swift ridicules English morality and civilization.

The article substantiates the idea that this disagreement enriches the English literature rather than impoverishing it.

**Keywords:** *bourgeoisie proficiency, nature, mind, philosophical novel, midget, false science, pessimism, optimism.*

---

<sup>1</sup> Օրինակ, Աննուդ Կետտլը գրում է. «Սա, անկասկած, պրիտչա է»: St' u Кеттл А., Введение в историю английского романа, Москва, 1966, стр. 33.

## О СВЯЗЯХ ДЕФО И СВИФТ

**АРАКЕЛЯН АРА**

*доктор филологических наук, профессор,  
преподаватель кафедры армянского языка и литературы ГГУ*

В статье предпринята попытка изучить сходства и различия в мировоззрении крупнейших представителей английской литературы 18-го века Даниэла Дефо и Джонатана Свифта, отраженные в их литературном наследии, в частности, в произведениях “Робинзон Крузо” и “Путешествие Гулливера”. Подчеркивается, что эта проблема не нова в литературе, ею занимались многочисленные как английские, так и русские ученые.

Живя в одной и той же стране, в ту же эпоху, Дефо и Свифт как мыслители и писатели в то же время имеют совершенно разные воззрения. Миропонимание Дефо связано с политической деятельностью новой буржуазии, в то время как интересы Свифта были в некоторой степени связаны с аристократией. Если Дефо в своем романе говорит о величии, деловитости и воле человека, всеми возможными способами возвеличивая Англию и англичанина, то Свифт высмеивает английскую мораль и цивилизацию.

В статье обосновывается мысль, что это разногласие не обедняет, а обогащает английскую литературу.

**Ключевые слова:** *буржуазная деловитость, натура, разум, философский роман, лилипут, ложная наука, пессимизм, оптимизм.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 28. 08. 2019թ.:

Հոդվածը գրախոսվել է 04. 10. 2019թ.: